

**Զինա Ա. Ավետիսյան**

**ՀԱԿՈՒ ՋՈՒՂԱՅԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՎ  
ՎԱՆԱՆԴԵՑԻՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ<sup>\*</sup>**

**Բանալի բառեր** – Նուրիջանյաններ, Վանանդեցիներ, հայկական տպագրություն, Հակոբ Զուղայեցի, Ամստերդամ, Թովմաս Վանանդեցի, կաթոլիկ եկեղեցի, Հավատասփյուռ ժողով, ազգային ինքնագիտակցության զարթոնք, ինքնություն:

**Մուտք**

Գողթան գավառից սերած և 17-րդ դարի վերջին Ամստերդամում հաստատված Վանանդեցիների<sup>1</sup> ընտանիքին էր վերապահված հայկական տպագրությունը և հայկական ինքնությունը նոր մակարդակի բարձրացնելու կարևոր դերը, քանզի Վանանդեցիներն իրենց բազմամյա անխոնջ գործունեությամբ նոր էջ բացեցին հայկական տպագրության պատմության մեջ՝ բարձր վարպետության հասցնելով նաև հայկական տպագրական արվեստը: «Ոսկանյան» տպարանի ավանդույթների հետքերով նրանք հաստատվեցին Ամստերդամում և շուրջ 30 տարվա անդուլ աշխատանքի շնորհիվ լույս ընծայեցին ավելի քան 30 անուն<sup>2</sup> կոթողային աշխատություն՝ հետապնդելով միայն ու միայն մեկ նպատակ՝ օգտակար լինել հայրենիքին:

<sup>\*</sup> Հոդվածն ընդունվել է տպագրության 26.06.2023:

<sup>1</sup> Վանանդ գյուղը գտնվում է Նախիջևանի Գողթան գավառում՝ փոխված Տրունյաց ձորի միջին հոսանքում (մանրամասն տե՛ս **Ավագյան Ա.**, Նախիջևան. Բնաշխարհիկ պատկերագրող հանրագիտակ, Եր., 2017, էջ 162-167):

<sup>2</sup> Տե՛ս **Լեյն Զ.**, Հայկական գրատպության սփյուռքը 1512-2012 թթ., Ամստերդամ-Երևան, 2012, էջ 113:

17-րդ դարի սկիզբը դարձավ հայ ժողովրդի գիտական ու մշակութային զարթոնքի կարևոր մեկնակետ: Պարսկա-թուրքական շուրջ մեկ դար տևած պատերազմների թատերաբեմի վերածված և անասելի դաժան օրեր ապրած Հայաստանն ու հայ ժողովուրդը, որին պատուհասած արհավիրքը խոչընդոտում էր ամեն տեսակ առաջադեմ միտում ունեցող երևույթների ներդրումը հայ իրականության մեջ, փորձում էին ձերբազատվել դարերով կուտակված խնդիրներից: Հետընթաց էին ապրել հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտները: Իսկ կաթոլիկ Արևմուտքից եկող դավանափոխության ծրագիրն ու հայերի՝ կաթոլիկացմանը միտված ակտիվ քայլերն էլ «ամբողջացնում էին» այդ տխուր պատկերը: Այդուհանդերձ, Արևմուտքից եկող դավանափոխության հուժկու ալիքը մի շարք բացասական երևույթների հետ բերեց նաև դրականը. նետված մարտահրավերին անպատրաստ հայ հոգևորականությունը համակվեց այդ հոսանքին դիմակայելու, դարերով կուտակած ազգային ավանդույթները վեր հանելու և վերարժևորելու ձգտումով ու ցանկությամբ: Եվ մի քանի տասնամյակ ձգված անդուլ աշխատանքի շնորհիվ նախկին հոգևորականության շարքերում, որը չգիտեր՝ ինչ է «վարել» բառը<sup>3</sup>, դարավերջին արդեն կային այնպիսի կիրթ ու պատրաստված հոգևորականներ, ինչպիսին էր, օրինակ, Սիմեոն վարդապետը՝ Նոր Զուղայի դպրոցից ելած երախտավորը:

Տգիտության փոշին թափ տալուն միտված վանական լուսավորության շարժումը սկիզբ առավ Ամենայն հայոց կաթողիկոս Մովսես Խոտանանցու (1629-1632) օրոք, զարգացում ապրեց Փիլիպոս Աղբակեցու (1633-1655) ջանքերով և իր բարձրակետին հասավ Հակոբ Զուղայեցու (1655-1680) գործուն քայլերի շնորհիվ: Սաղմոսարանների, շարակնոցների կողքին լույս տեսնող կոթողային աշխատությունները, ինչպիսիք էին Առաքել Դավրիժեցու «Պատմությունը» (Ամստեր-

---

3 Առաքել Դավրիժեցին գրում է, որ Մովսես Տաթևացի կաթողիկոսն իր մեծ աշակերտ Խաչատուր Կեսարացուն մի քանի միաբանների հետ ուղարկում է Լեհաստան՝ Սուրբ Էջմիածնի նվիրակության համար: Լվովում նրանց մոտ հակաճառության են գալիս մի քանի կաթոլիկներ և հարցնում. «Վարեն բառը անո՞ւն է, թե՞ բայ»: Հայ միաբանները չեն կարողանում պատասխանել ու ծաղրուծանակի են ենթարկվում կաթոլիկների կողմից: Վիրավորված հայ հոգևորականները որոշում են հայրենիք վերադառնալուց հետո Մելիքսեթ վարդապետի միջոցով փիլիսոփայական գրքեր կարդալ (տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ **Վ. Առաքելյանի**, Եր., 1988, էջ 312-313):

դամ, 1669), Վանանդեցիների հրատարակած Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» (Ամստերդամ, 1695) և «Համատարած աշխարհացույցը» (Ամստերդամ, 1696), հետապնդում էին նույնպիսի՝ լուսավորություն տարածելու, ազատասիրական ձգտումներ առաջացնելու և օտար բռնակալի լուծը թոթափելու առաջադեմ նպատակներ:

Երկփեղկված հայրենիքում ապրող հայ ժողովրդին կրթելուն միտված գործողությունների շարքում առաջինը Մատթեոս Ծարեցուն Եվրոպա ուղարկելն էր: Պատմաբան, գրող Առաքել Սարուխանը, վկայակոչելով հոլանդացի պատմագիրներին, նշում է. «Հայաստանի պատրիարքը Հակոբ, արուեստի և գիտությանը սիրահար մի մարդ, 1656-ին լսելով, որ Վենետիկի և Նոր Զուղայի տպարանների տառերը մաշուել, անգործածելի են դարձել, իր սարկաւագ Մաթեոս Ծարեցին Հոլլանդա է ուղարկել, որ լուսագոյն տառեր պատրաստել տայ»<sup>4</sup>: Ծարեցին երկարատև դեգերումներից հետո Ամստերդամում է հաստատվել 1660 թ. և հրատարակվելիք Աստվածաշնչի համար կաղապարներ է պատրաստել տվել Քրիստոֆել վան Դեյքին<sup>5</sup>՝ հայ վաճառական Շահնագարվենի թարգմանությամբ<sup>6</sup>, սակայն մեկ տարի անց՝ 1661 թ. փետրվարի 1-ին<sup>7</sup>, վախճանվել է՝ ավարտին չհասցնելով Ներսես Շնորհալու «Հիսուս որդին», Էջմիածնի և Սուրբ Սարգիս եկեղեցու տպարանն ընծայելով իր սիրասուն հայրենիքին:

Շուտով Էջմիածնի և Սուրբ Սարգիս եկեղեցու տպարանի իրավասություններն անցնում են Ուշիի Սբ Սարգիս եկեղեցու եպիսկոպոս Ոսկան Երևանցուն: Վերջինս, շատ մեծ դժվարություններ հաղթահարելով, կարողանում է 1666-1668 թթ. լույս ընծայել հայերեն առաջին Աստվածաշունչը: Սակայն Հոլանդիայում տպարանը մեծ պարտքերի տակ է ընկնում, և Ոսկան Երևանցին ստիպված թողնում է Հոլանդիան՝ տեղափոխվելով և հաստատվելով Լիվոռնոյում: Հայ տպագրիչի՝ Հոլանդիայից հեռանալուն զուգահեռ՝ իրենց գործունեու-

4 Սարուխան, Հոլլանդան և հայերը, Վիեննա, 1926, էջ 71:

5 Տե՛ս Կիրեղեան-Պալքճեան Խ., Առեստոր և բարգաւաճում (Անսթէրտամի հայոց գաղութը), Անսթէրտամ, 2018, էջ 24, Գուրիեզ Ֆ., Հայերեն գրքերի տպագրությունը Ամստերդամում XVII-XVIII դարերում, «Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի տեղեկագիր», Եր., 1963, N 2, էջ 84:

6 Տե՛ս Լեյն Զ., նշվ. աշխ., էջ 72:

7 Տե՛ս Կիրեղեան-Պալքճեան Խ., նշվ. աշխ., էջ 87:

թյունն են սկսում Թովմաս Նուրիջանյան Վանանդեցին ու նրա գարմիկները:

Թովմասը Գողթան գավառի Տրունյաց Ս. Խաչ եկեղեցու վանահայրն էր<sup>8</sup>, Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի մտերիմն ու գաղափարակիցը: Թովմասի և նրա ընտանիքի բեղուն գործունեության մասին կարևոր տվյալներ են հաղորդում Ժ. Վաներուսը<sup>9</sup> և Ա. Սարուխանը<sup>10</sup>: Այնուհետև Մ. Տեր-Գրիգորյանը «Հանդէս ամսօրեայ»-ի 1965-1967 թթ. համարներում<sup>11</sup> լուսաբանել է Թովմաս Վանանդեցուն պատկանող փաստաթղթերի և գրությունների բովանդակությունը, որոնք պահպանվում էին Անվերսի (Անտվերպեն) պետական դիվանում: Առանձնահատուկ կարևորություն ունի նաև Մխիթարյան միաբան Սահակ Ճեմճեմյանի աշխատությունը<sup>12</sup>, հիմնված Հավատասփյուռ ժողովի (այսուհետ՝ ՀՍ, Propaganda Fide) դիվանի երկարամյա ուսումնասիրությունների վրա:

Սույն հոդվածի շրջանակներում փաստական նյութերի համադրմամբ փորձել ենք նոր շունչ հաղորդել ուսումնասիրվող թեմային և կատարել մի շարք փաստագրական ճշգրտումներ, որոնք դուրս են մնացել հետազոտողների ուշադրությունից:

## 1. Վանանդեցիների գործունեության մեկնարկը

Անվանի եպիսկոպոս ու վաստակաշատ հրատարակիչ Թովմաս Նուրիջանյանը մահացել է 1708 թ. Բելգիայի Անվերս քաղաքում՝ հայրենիք վերադառնալու ճանապարհին: Հուղարկավորությունից հետո քաղաքային նոտարը Անվերսի մայր եկեղեցու արարողապետի և Թովմասի հետ Անվերս ժամանած Հովհաննես Գասպարի և Պետրոս

---

8 Տե՛ս **Այվազյան Ա.**, նշվ. աշխ., էջ 166:

9 Տե՛ս **Vannérus J.**, Note sur une imprimerie arménienne établie à Amsterdam en 1695, Belgique, Bruxelles, 1906:

10 Առաջին անգամ Թովմաս Վանանդեցու իրերի կապոցին ծանոթանում է Անվերսի պետական դիվանի նախկին կառավարիչ Ժյուլ Վաներուսը և 1906 թ. հրատարակում իր «Note sur une imprimerie arménienne établie à Amsterdam» գրքում: Այնուհետև Սարուխանը նշված գրքին ծանոթանալուց հետո նորից անձամբ ուսումնասիրում է դրանք և զետեղում իր «Բելգիա և հայեր» գրքում:

11 Տե՛ս **Տեր-Գրիգորեան Մ.**, Նոր նիւթեր և դիտողութիւններ հրատարակիչ Վանանդեցուց մասին, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1965, N 7-9, էջ 247-360, 1966, N 1-3, էջ 43-58, N 4-6, էջ 171-184, N 7-9, էջ 309-322, N 10-12, էջ 469-474, 1967, N 1-3, էջ 51-66:

12 Տե՛ս **Ճեմճեմեան Ս.**, Հայ տպագրութիւնը և Հռոմ (ԺԷ դար), Վենետիկ, 1989:

Ավարեսի ներկայությամբ ցուցակագրել է եպիսկոպոսի իրերը<sup>13</sup>: Դրանցում հայտնաբերված փաստաթղթերը, ըստ ամենայնի, հետագայում ձեռք են բերել աղբյուրագիտական կարևոր նշանակություն և այդպիսով լույս են սփռում ուսումնասիրվող թեմայի վրա:

Վանանդեցիների ընտանիքի ազգանվեր գործունեության մասին կարևոր մանրամասներ ենք քաղում հենց իր՝ Թովմաս Վանանդեցու ոչ ծավալուն լատիներեն կտակից, որը նա գրել էր 1707 թ. Լոնդոնում, և որը հրատարակել է Մ. Տեր-Գրիգորյանը<sup>14</sup>:

Ըստ կտակի՝ հայրենիքին օգտակար լինելու մղումը և «խավարի մեջ ապրող քրիստոնյաներին»<sup>15</sup> կրթելուն ուղղված քայլերը Ս. Խաչի եպիսկոպոսին տարել են Եվրոպա. առաջին անգամ՝ 1670-1673 թթ., երկրորդ անգամ՝ 1679-1708 թթ.<sup>16</sup>:

Դժվարին կացության մեջ գտնվող Ոսկան Երևանցուն օժանդակելու նպատակով Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի հրահանգով Թովմաս Նուրիջանյանը վերցնում է իր մորեղբոր որդուն՝ Մատթեոս Հովհաննիսյանին, և ուղևորվում Երևանցու մոտ: Այս դրվագի մասին նշվում է 1685 թ. Ամստերդամում լույս տեսած «Շարակնոցի» հիշատակարանում<sup>17</sup>: Դրանում հիշատակված է, որ նրանք միասին հասել են Հռոմ, որտեղից նրանց ձանապարհները բաժանվել են: Դևոնդ Ալիջանը նրանց՝ Եվրոպա մեկնելու թվականը նշում է 1667-ը և հավելում, որ նրանք կանգ են առել Կիպրոսում, որտեղ մնացել են մեկուկես տարի<sup>18</sup>: Նշանավոր պատմաբան Լեոն Էլ նշում է, որ նրանք Լիվոռնո են հասել 1670 թ., երբ Ոսկան Երևանցին արդեն տպարանն Ամստերդամից տեղափոխել էր այնտեղ: Իսկ Հռոմում գտնվելու փաստն օգտագործելով և տեղյակ լինելով, որ Թովմասի եղբոր որդիները՝ Միքայելն ու Դուկասը, լատին կրթություն են ստացել, անվանի պատմաբանը շտապում է ենթադրելու, որ Թովմասը նրանց

13 Տե՛ս **Սարուլյան**, Բելգիա և հայերը, Վիեննա, 1937, էջ 137:

14 Տե՛ս **Տեր-Գրիգորեան Մ.**, նշվ. աշխ., «Հանդէս անօրեայ», 1966, N 7-9, էջ 315-317:

15 Նույն տեղում, էջ 315:

16 Տե՛ս նույն տեղում, 1965, N 7-9, էջ 355-356:

17 «... ես նուստս յամենից Մատթեոս դպիրս եկի ծառայելով ընդ արենակից վարդապետին ինոյ յերկիրն յիտալացոց և ի մայրաքաղաքն Հռոմ, և վեհն ին գնաց յայլուրեք, և ես դարձայ Յալիկոնայ առ ոտս աշակերտի տեսոն Ոսկանայ արհիեպիսկոպոսի տեսոն Կարապետ վարդապետի...» (**Ոսկանյան Ն., Կորկոտյան Ք., Սավայան Ա.**, Հայ գիրքը 1512-1800 թվականներին, «Հայ գրքի մատենագիտություն», հատ. 1, Եր., 1988, էջ 95):

18 Տե՛ս **Ալիջան Դ.**, Սիսական, Վենետիկ, 1883, էջ 340:

Հռոմում կրթության տալու համար էր ուղևորվել այնտեղ<sup>19</sup>: Սակայն մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Թովմասն առաջին անգամ բոլորովին այլ նպատակով էր ուղևորվել Հռոմ, ինչի մասին վկայում են Հավատասփյուռ ժողովի դիվանում պահպանված փաստաթղթերը, և ինչը Թովմասը խնամքով թաքցնում էր՝ հետապնդելով ինչ-ինչ նպատակներ: Իսկ այն մասին, որ իր երկու ճանապարհորդությունների ընթացքում էլ նա մտերիմ հարաբերությունների մեջ է եղել կաթոլիկների հետ, վկայում են վերոհիշյալ աղբյուրները: Այսպես՝ 1685 թ. ապրիլի 3-ով թվագրված նամակում Թովմաս Եդեսացի հայրապետը<sup>20</sup> զայրոյթով է արտահայտվում Թովմաս Վանանդեցի եպիսկոպոսի մասին՝ հայտնելով հետևյալը. «... այս Թովմասը 18 տարի կամ ավելի առաջ, երբ դեռ եպիսկոպոս չէր, Հռոմ եկաւ, հաւատքի դաւանութիւն տուաւ, ապա Հայաստան դառնալով՝ հերձուածողներու մէջ եպիսկոպոս եղաւ. կրկին դարձաւ Հռոմ ուսկից եկաւ Մարսիլիա, անցաւ Սպանիա, և ուզեց իր այս չարիքը ընել Ամստերդամի մէջ հայկական գիրքեր տպելով»<sup>21</sup>:

Ըստ երևույթին, Թովմաս Վանանդեցին առաջին անգամ, այսինքն՝ 1667 թ., Հռոմ էր ուղևորվել նույն նպատակով, ինչ երկրորդ անգամ՝ պատարագելու, գումար հավաքելու, Ոսկան Երևանցուն և տպարանին ֆինանսական օժանդակություն ցուցաբերելու, բայց քանի որ դեռ եպիսկոպոս չէր, չի կարողացել գլուխ բերել իր ծրագրած գործը: Ուստի, ըստ ամենայնի, Հայաստան գալով, ձեռնադրվել է եպիսկոպոս և նույն առաքելությամբ վերադարձել Եվրոպա:

Թովմաս Վանանդեցին, սակայն, իր կտակում գրում է, որ իր մորեղբոր որդու՝ Մատթեոս Հովհաննիսյանի հետ հայրենիքից դուրս է եկել 1670 թ. և օսմանյան երկրի ճանապարհով հասել Հալեպ, որտեղ ինացել է Ոսկան Երևանցու՝ Մարսել տեղափոխվելու մասին և այնուհետև մորեղբոր որդուն տարել է Մարսել ու հանձնել Ոսկանին, իսկ ինքը 1673 թ. Իտալիա-Ավստրիա-Լեհաստան-Վալախիա և Կոս-

19 Տե՛ս **ԱԷՌ**, Հայկական տպագրութիւն, հատ. 1, Թիֆլիս, 1904, էջ 417:

20 Թովմաս Եդեսացին սովորել է Հռոմի Կղեմես Գալանոսի վարժարանում, այնուհետև ուսումը շարունակել է Բրաքայի Ս. Բարդուղիմեոսի վանքում հմտանալով փիլիսոփայության և աստվածաբանության մեջ: Խիստ ընդգծված հակակրանք է ունեցել հայ տպագրիչների նկատմամբ՝ փորձելով ամեն կերպ վատաբանել և վարկաբեկել նրանց (մանրամասն տե՛ս **Ճեմձեմեան Ս.**, նշվ. աշխ., էջ 134-151):

21 Նույն տեղում, էջ 189:

տանդնուպոլիս ճանապարհով վերադարձել է հայրենիք<sup>22</sup>: Սակայն Մատթեոսը «Շարակնոցի» հիշատակարանում գրում է, որ Հռոմում իրենց ճանապարհները բաժանվել են («... վեհն իմ գնաց յայլուրեք, և ես դարձայ յԱլիկառնայ (Լիվոռնո)»<sup>23</sup>), և ինքը 14 տարի առանց վարձ ակնկալելու աշխատել է տպարանի համար: «Ոսկանյան» տպարանը դադարեցրել է իր գործունեությունը 1684 թվականին<sup>24</sup> նույն տարում լույս ընծայելով վերջին՝ «Պարտեզ հոգևոր» գրքույկը<sup>25</sup>: Ուստի, ըստ ամենայնի, Մատթեոսն իր աշխատանքը Լիվոռնոյի տպարանում սկսել է 1670 թվականին, իսկ Ոսկան Երևանցին 1672 թ. հուլիս-օգոստոս ամիսներին է իր տպարանը տեղափոխել Մարսել<sup>26</sup>, հետևաբար չէին կարող 1670 թ. Ոսկանին հանդիպել Մարսելում:

Մատթեոս Վանանդեցին Թովմաս Նուրիջանյանին Մարսելում նորից հանդիպելու մասին ոչինչ չի հայտնում: Փոխարենը Թովմասը կտակում նշում է, որ Մարսելում իր և Ոսկան Երևանցու միջև համաձայնություն է ձեռք բերվել հայ երիտասարդներին Եվրոպա տանելու և կրթելու առնչությամբ, և երիտասարդներ հավաքագրելու առաքելությամբ ինքը 1673 թ. վերադարձել է հայրենիք<sup>27</sup>: Այստեղ ևս մի դիպված խախտում է ժամանակագրական շղթան, քանի որ Թովմաս Վանանդեցու իրերի մեջ գտնվել է Հակոբ Զուղայեցու մի հանձնարարագիր՝ ուղղված իրեն՝ Թովմասին՝ Խոյում և Սալմաստում նվիրակություն անելու համար<sup>28</sup>: Սա, ըստ ամենայնի, արվել է մի քանի տարի առանց թեմակալ մնացած Ս. Խաչը կարգի բերելու նպատակով: Այդ հանձնարարագիրը թվագրված է 1672 թ. հոկտեմբերի 20-ով<sup>29</sup>: Ուստի, ըստ երևույթին, Թովմասը 1672 թ. արդեն պետք է հայրենիք վերադարձած և իր թեմը կարգի բերելու գործին լծված լիներ:

Այնուհետև կտակում Թովմասը նշում է, որ հայրենիք վերադառնալուց հետո հորդորել է եկեղեցականներին (ըստ երևույթին՝ Հակոբ Զուղայեցուն) և իր հարևաններին (ենթադրում ենք, որ կապի մեջ է եղել նաև վրացիների հետ) օժանդակել այս ձեռնարկի իրագործմա-

22 Տե՛ս **Տեր-Գրիգորեան Մ.**, նշվ. աշխ., «Հանդէս ամսօրեայ», 1966, N 7-9, էջ 315:

23 **Ոսկանյան Ն., Կորկոտյան Ք., Սավայան Ա.**, նշվ. աշխ., էջ 95:

24 Տե՛ս **Ամատունի Կ.**, Ոսկան վրդ. Երևանցի և իր ժամանակը, Վենետիկ, 1975, էջ 214:

25 Տե՛ս **Ոսկանյան Ն., Կորկոտյան Ք., Սավայան Ա.**, նշվ. աշխ., էջ 91:

26 Տե՛ս **Ամատունի Կ.**, նշվ. աշխ., էջ 207:

27 Տե՛ս **Տեր-Գրիգորեան Մ.**, նշվ. աշխ., «Հանդէս ամսօրեայ», 1966, N 7-9, էջ 315:

28 Տե՛ս նույն տեղում, 1967, N 1-3, էջ 61:

29 Տե՛ս նույն տեղում, 1966, N 7-9, էջ 61:

նը՝ բացատրելով, թե որքան կշահի եկեղեցին դրանից: Ապա ավելացնում է, որ, չկարողանալով գործը գլուխ բերել, քանի որ մեկին ուժն էր պակասում, մեկին՝ կամքը, մյուսին՝ գիտելիքը, վերցրել է իր երկու զարմիկներին՝ Ղուկասին և Միքայելին, և ուղևորվել Եվրոպա՝ նշելով 1679 թվականը<sup>30</sup>:

## 2. Վանանդեցիների դեգերումները և հաստատումը Ամստերդամում

Ուսումնասիրելով Հավատաստիյուռ ժողովի դիվանը՝ Ս. Ճեմձեմյանն արձանագրում է, որ Թովմաս Եպիսկոպոսը երկրորդ անգամ հայրենիքից դուրս է եկել 1678 թ. մայիսին, ինչի մասին նշված է նրան տրված հանձնարարական նամակի վրա՝ գրված Գանձասարի Երեմիա կաթողիկոսի<sup>31</sup> կողմից: Վերջինս խնդրում էր, որ սիրով ընդունեն Թովմասին, ինչպես նախորդ անգամ<sup>32</sup>: Այստեղից հետևում է, որ առաջին ուղևորության ժամանակ ևս Թովմասը կապ է ունեցել հռոմեական եկեղեցու հետ:

Ըստ դիվանի՝ Թովմասը 1681 թ. Վիեննայում էր, որտեղ հանդիպել է Հակոբ Զուղայեցու մտերիմներից Պետրոս Պետիկին (Pedros Bedik), որին ներկայացել է որպես մոլեռանդ կաթոլիկ<sup>33</sup>: Նա 1681 թ. սեպտեմբերին հասել է Հռոմ և գրավոր աղերսագիր ներկայացրել Հավատաստիյուռ ժողովին՝ խնդրելով իր երկու զարմիկներին՝ 16-ամյա Ղուկասին և 12-ամյա Միքայելին ընդունել Ուրբանյան վարժարան (Collegium Urbanum)<sup>34</sup>:

Նույն աղբյուրը հայտնում է, որ զարմիկներին Ուրբանյան վարժարանում տեղավորելուց հետո Թովմասը մտադրվել է վերադառնալ հայրենիք և սկսել է հավաքել վկայականներ ու հանձնարարական նամակներ, սակայն իրադարձությունների հետագա ընթացքը ցույց է տալիս, որ նա Հայաստան այդպես էլ չի վերադարձել:

---

30 Տե՛ս նույն տեղում, էջ 315:

31 Գանձասարի կաթողիկոս Երեմիա Հասան-Ջալալյանը կաթողիկոսական աթոռը զբաղեցրել է 1675-1700 թթ. պարսից Սուլեյման շահի (1666-1694) հրովարտակով (տե՛ս **Մաղայան Ա.**, Արցախի մեկիթությունները և մեկիթական տները XVII-XIX դդ., Եր., 2007, էջ 131-132):

32 Տե՛ս **Ճեմձեմեան Ս.**, նշվ. աշխ., էջ 185:

33 Տե՛ս նույն տեղում, էջ 186:

34 Տե՛ս նույն տեղում, էջ 187:



Թովմասը նույնիսկ աղերսագիր է հղել Հռոմի Իննուկենտիոս XI պապին՝ խնդրելով նամակ և նվերներ պատրաստել պարսից շահի համար, որպեսզի իր թեմը, որը գրավել էր մի «հերձվածող» եպիսկոպոս, նորից տրվի իրեն՝ խոստանալով կաթոլիկ դարձնել բոլորին<sup>35</sup>:

Մեկ այլ խնդրագրով էլ Թովմասն իր հետ Հայաստան որոշ գրքեր տանելու թույլտվություն և գումար է խնդրել<sup>36</sup>: Ըստ երևույթին, նրա խնդրագրերին մերժողական պատասխաններ են տրվել, և նա Հայաստան վերադառնալու շարժառիթ այլևս չի ունեցել, քանի որ որևէ լծակ չունեի իր գործունեությունն արդյունավետորեն շարունակելու համար: Ուստի 1682 թ.՝ Զատկի տոներից հետո, Հայաստան վերադառնալու փոխարեն նա մեկնել է Նեապոլ: Դիվանում պահպանված թղթերի համաձայն՝ 1683 թ. վերջերին Թովմասը մեկնել է Մարսել և, ըստ երևույթին, հանդիպում ունեցել իր մորեղբոր որդու՝ Մատթեոսի հետ: Մարսելից մեկնել է Իսպանիա՝ իր մոտ կանչելով Մատթեոսին և հանձնարարելով նրան գնալ Ամստերդամ ու կազմակերպել տպագրության գործը<sup>37</sup>:

Իսկ ի՞նչ էր անում Թովմաս եպիսկոպոս Վանանդեցին Իսպանիայում: Մ. Տեր-Գրիգորյանը, հետևելով նրա կտակին, նշում է, որ սպասում էր, որ իր զարմիկներն ավարտեին ուսումը<sup>38</sup>: Սակայն Ս. Ճեմձեմյանի՝ Հավատասփյուռ ժողովի դիվանում կատարած ուսումնասիրությունից պարզվում է, որ մոտ տասը տարի Թովմասն Իսպանիայում պատարագում և դրամ էր հավաքում Մատթեոսին օգնելու համար, սակայն կաթոլիկներին հավաստիացնում էր, թե իբրև Սուրբ Խաչի եպիսկոպոս գումար է հավաքում եկեղեցի կառուցելու և բանտարկված եղբորը պարսից գերությունից ազատելու համար<sup>39</sup>:

1688 թ. մարտի 10-ին Թովմաս Նուրիջանյանը նամակ է գրել Հավատասփյուռ ժողովին՝ հայտնելով իր ծանր առողջական վիճակի մասին, և խնդրել, որ իր զարմիկներին՝ Ղուկասին և Միքայելին, ուղարկեն իրեն օգնության<sup>40</sup>: Ըստ ամենայնի, Թովմասը նամակ էր ուղարկել նաև զարմիկներին՝ տեղեկացնելով իրավիճակի մասին,

35 Տե՛ս նույն տեղում:

36 Տե՛ս նույն տեղում:

37 Տե՛ս նույն տեղում, էջ 189:

38 Տե՛ս **Տեր-Գրիգորեան Մ.**, նշվ. աշխ., «Հանդէս ամսօրեայ», 1965, N 7-9, էջ 356:

39 Տե՛ս **Ճեմձեմեան Ս.**, նշվ. աշխ., էջ 193:

40 Տե՛ս նույն տեղում, էջ 191:

քանի որ Ղուկասն ու Միքայելը ևս աղերսագիր են գրել և խնդրել թույլ տալ «երթալ իրենց հօրեղբօր մօտ, որպէսզի միասին դառնան հայրենիք, ուր կը մտածեն աշխատիլ իրենց տուած երդումին համաձայն»<sup>41</sup>: Ըստ դիվանի թղթերի՝ նրանք դուրս են եկել վարժարանից 1688 թ. հոկտեմբերի 18-ին և մեկնել Իսպանիա<sup>42</sup>:

Վանանդեցիներից ոչ մեկը, սակայն, հայրենիք չի վերադառնում: Կտակում Թովմասը հայտնում է, որ երբ 1688 թ. իր զարմիկները, ավարտելով ուսումը (չի նշում, թե որտեղ են սովորել), գնացել են Լիսաբոն<sup>43</sup>, Ղուկասին ուղարկել է Ամստերդամ՝ Մատթեոսի մոտ, իսկ Միքայելը հրաժարվել է նման ճանապարհորդությունից՝ նախընտրելով մնալ Իսպանիայում բժշկություն սովորելու համար<sup>44</sup>: Այս մասին հետաքրքիր տեղեկություն է պահպանվել 1693 թ. հունիսին Կոմպոստելլայի Անտոն արքեպիսկոպոսի՝ Հռոմի պապին հղած նամակում: Արքեպիսկոպոսը հայտնում էր, որ երկար ժամանակ՝ 10-12 տարի, այնտեղ էր Թովմասը՝ Սուրբ Խաչ վանքի եպիսկոպոսը, ով դրամ էր հավաքում եկեղեցի կառուցելու և իր եղբորը գերությունից ազատելու համար: Այնուհետև ավելացնում է, որ նրա հետ էին մի նորընծա կաթոլիկ, ով թարգմանի պաշտոն էր կատարում, շրջում և դրամ հավաքում, և ևս մեկ օգնական, ով, ասում էին, իր զարմիկն էր<sup>45</sup>: Ըստ ամենայնի, խոսքը Միքայելի մասին էր:

Ինչ վերաբերում է թարգմանի պաշտոնակատարի ներկայությանը, ապա դա պայմանավորված էր նրանով, որ Թովմասը չի տիրապետել լատիներենին: Այս մասին հետաքրքիր տեղեկություն է պահպանվել Բողլեյան գրադարանի տարեգրություններում: Դրանցում նշվում է, որ 1707 թ. մայիսի 24-ին Օբսֆորդ է ժամանել Մեծ Հայքի Գողթան գավառի եպիսկոպոս (բնագրում՝ Patriarch) Թովմասը: Հաջորդ օրը նա հյուրընկալվել է գրադարանում, որտեղ նրա պատվին լատիներենով մեծարանքի խոսք է ասվել, սակայն 90 տարեկանին մոտ վարդապետը, ով չէր հասկանում ո՛չ լատիներեն, ո՛չ հունա-

---

41 Նույն տեղում, էջ 192:

42 Տե՛ս նույն տեղում:

43 1668 թ. Պորտուգալիան՝ Լիսաբոն մայրաքաղաքով, անկախացել է Իսպանիայից, որի կազմում էր շուրջ 90 տարի: Սակայն, ըստ երևույթին, հանրային գիտակցության մեջ այն շարունակում էր ընկալվել որպես Իսպանիայի մաս:

44 Տե՛ս **Տեր-Գրիգորեան Մ.**, նշվ. աշխ., «Հանդէս ամսօրեայ», 1966, N 7-9, էջ 315:

45 Տե՛ս **Ճեմմեմեան Ս.**, նշվ. աշխ., էջ 193:

րեն, ո՛չ էլ այլ եվրոպական լեզու, բացի իտալերենից, քիչ ուշադրություն է դարձրել դրան<sup>46</sup>: Առաջ անցնելով նշենք, որ Թովմաս վարդապետն Անգլիա էր մեկնել՝ տպարանի գործերը կարգի բերելու համար Աննա թագուհուց ֆինանսական օժանդակություն խնդրելու: Այսպես տարիներ շարունակ ակեզարդ ծերունին անընդհատ մի վայրից մյուսն է անցել, բազում դժվարությունների բախվելով՝ նյութական միջոցներ հայթայթել՝ հետապնդելով լոկ մեկ նպատակ՝ ոտքի հանել հայկական տպարանն Ամստերդամում:

Թովմաս Նուրիջանյանը Ամստերդամ է հասել 1694 թ. և Մատթեոսի հետ լծվել տպագրական գործին: Մինչ այդ Մատթեոսն արդեն տպագրել էր երկու «Շարակնոց» (1685, 1692), երկու «Ժամագիրք» (1686, 1688) և մեկ «Մաշտոց» (1687)<sup>47</sup>:

«Շարակնոցի» հիշատակարանում Թովմասը նշում է, որ տառերը պատրաստել է տվել Նիկոլայուս անունով վարպետին<sup>48</sup>: Այդ վարպետը Հունգարիայում ծնված, ապա Հոլանդիայում հաստատված Նիկոլա Միսթոթֆոլուշի Քիշն էր, ով հայերի մասին խոսելիս նշում էր, որ ինքը ծառայություն է մատուցել հայոց ազգին<sup>49</sup>:

Թովմաս վարդապետ Նուրիջանյանի կյանքի առանձին դրվագների և գործունեության ուսումնասիրությունը, իհարկե փաստական նյութի սակավության պատճառով, որոշ անձշտությունների տեղիք է տվել: Լեոն և նրանից ազդված մի խումբ ուսումնասիրողներ սխալ հաջորդականությամբ են մեկնաբանում դեպքերի զարգացումը: Լեոն, անտեղյակ լինելով Թովմասի երկրորդ ուղևորությանը դեպի Եվրոպա, գրում է, որ Մատթեոսն իր գործընկերների հետ ունեցած անհաճո դատավարությունից հետո մենակ ու անօգնական է մնացել օտար երկնքի տակ և ստիպված վերադարձել հայրենիք՝ իր թողած գործը շարունակելու համար օգնական գտնելու: Այդ ժամանակ Թովմաս վարդապետն արդեն Գողթան գավառի եպիսկոպոսապետն էր: Մատթեոսը դիմել է նրան՝ խնդրելով թողնել եպիսկոպոսական աթոռը, անցնել Եվրոպա և զարկ տալ հայկական տպագրությանը: Թեև Թովմասը շատ էր սիրում իր հայրենի Գողթանը, այնուամենայնիվ,

46 St' u Annals of the Bodleian Library, Oxford, A.D. 1598-A.D. 1867, էջ 128:

47 St' u Ոսկանյան Ն., Կորկոտյան Ք., Սավալյան Ա., նշվ. աշխ., էջ 95-113:

48 St' u նույն տեղում, էջ 95:

49 St' u Schütz O., Նիկոլա Միսթոթֆոլուշի Քիշ և հայ գրքի տպագրությունը, թարգմ.՝ Մ. Կ. Սևակ, «Հանդէս ամսօրեայ», 1960, N 7-9, էջ 403:

վերցրել է պանդխտության գավազանը<sup>50</sup>: Իսկ Գարեգին Լևոնյանը, ավելի առաջ գնալով, գրում է, որ նա այդ քայլին է դիմել «Ոսկանի ստացած համբավի բարի նախանձով»<sup>51</sup>: Մեծ պատմաբանը, օգտագործելով Խորենացու «Պատմության» հիշատակարանում պահպանված վկայությունը, ըստ որի՝ Թովմասը նախքան իր՝ Եվրոպա ուղևորվելը Ամստերդամ է ուղարկել Մատթեոսին, որպեսզի անհրաժեշտ պատրաստություններ տեսնի<sup>52</sup>, շտապում է եզրակացնելու, որ Մատթեոսն անպատժառ հայրենիք է վերադարձել Ամստերդամում ունեցած անհաջողություններից հետո: Մինչդեռ, ինչպես վերը նշվածից է ակնհայտ դառնում, Մատթեոսը 1669 թվականից, իսկ Թովմասը 1679 թվականից հետո մինչև մահ հայրենիք չեն վերադարձել, այլ այստեղ-այնտեղ դեգերելով, սրան-նրան աղերսելով՝ միջոցներ են ձեռք բերել տարաբնույթ գրքեր տպագրելու և իրենց սիրասուն հայրենիքին ու խավարի մեջ խարխափող հայրենակիցներին օգտակար լինելու համար:

Հիրավի, Վանանդեցիների տպագրական գործունեության գոհարը Պատմահոր երկն էր: «Ազգաբանութին տոհմին Յարեթեան...»<sup>53</sup> ծավալուն և խոսուն վերնագրով լույս ընծայված աշխատությունը եկավ սրբելու հայ ժողովրդի պատմության վրա կիտված դարավոր փոշին: Լեոյի ձևակերպմամբ՝ Վանանդեցիների ձեռքով «Խորենացին Ամստերդամից գնաց ներկայացնելու հայերին իբրև պատմական ազգ, իբրև իր անկախությունը, իր քաղաքական դիրքը պահպանած մի հին ցեղ, որ շփվում էր Ասորեստանի, Պարսկաստանի, Հռոմի և Բյուզանդիայի հետ»<sup>54</sup>:

Թովմաս վարդապետ Նուրիջանյանը և իր զարմիկները շուրջ 40 տարի անխոնջ մշակների նման ծառայել են ի շահ իրենց հայրենիքի և հայ ժողովրդի: Բազմամյա գործունեության ընթացքում իրենց

---

50 Տե՛ս **ԼԷՆ**, նշվ. աշխ., էջ 419:

51 **Լևոնյան Գ.**, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Եր., 2012, էջ 113:

52 Տե՛ս **Ոսկանյան Ն., Կորկոտյան Ք., Սավալյան Ա.**, նշվ. աշխ., էջ 117:

53 «Ազգաբանութին տոհմին Յարեթեան Յօրինեցեալ ի Մովսիսէ Խորենացոյ, յեռանծ Վարդապետէ յօգներախտ Քերթողահօրէ ի խնդրոյ Պայազասպետի Սահակայ Բագրատունոյ: Հարազատ և բուն Պատմութին նախնեացն Առաջնոց, Թագաւորաց, Իշխանաց, Նախարարաց Հայրապետաց Արամեան ազգին: Սկսեալ ի Հայկայ Քաջէ, մինչ ց'Արտաշիր թագաւորն մեր», Ամստերդամ, 1695:

54 **ԼԷՆ**, նշվ. աշխ., էջ 437:

հրատարակումներով փորձել են նոր մակարդակի հասցնել հայ ժողովրդի ինքնագիտակցությունը և կենդանություն հաղորդել բռնադատված ազգային «Ես»-ին:

Հակոբ Զուղայեցու գաղափարակից և մտերիմ Թովմաս Նուրիջանյանը նրա հորդորով և կարգադրությամբ ուղևորվեց Եվրոպա՝ «Ոսկանյան» տպարանին օժանդակելու համար: Հայրենիքից կտրված և պանդխտության ցուպը ձեռքին՝ Թովմաս վարդապետը դեգերեց Եվրոպայով մեկ, երկարուձիգ տարիների ընթացքում, գործի դնելով իր բանավարական հնտությունները, կարողացավ նոր մակարդակ տեղափոխել հարաբերությունները ժամանակի կարևոր քաղաքական դեմքերի հետ և իրագործել ի սկզբանե իր առաջադրած նպատակը, որի համար սկսել էր իր դժվարին ճանապարհը:

Տասնամյակներ տևած դեգերումներից հետո Թովմաս Նուրիջանյանն իր զարմիկների հետ ի վերջո հաստատվեց Ամստերդամում: Նրանք իրենց ողջ ներուժով լծվեցին հայ տպագրության զարգացմամբ հայկական ինքնությանը կենդանություն հաղորդելու կարևորագույն գործին, որն իրականացվելու էր հայ հասարակության մեջ լուսավորության տարածման միջոցով:

### Եզրակացություններ

17-րդ դարի սկիզբը դարձավ հայ ազգի մշակութային զարթոնքի նոր մեկնակետը: Պատերազմների դառնաչունչ էջը փակած հայ ժողովուրդը լծվեց լուսավորության տարածման գործին, որն ի կատար էր ածվելու տպագրական գործունեության միջոցով: Հայ տպագրության զարգացումը շարակնոցների, սաղմոսարանների և մաշտոցների հետ հրապարակ բերեց այնպիսի կոթողային աշխատություններ, ինչպիսիք էին Ոսկան Երևանցու հրատարակած Առաքել Դավրիժեցու «Պատմությունը», Վանանդեցիների լույս ընծայած Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և «Համատարած աշխարհացույցը»: Ամենայն հայոց կաթողիկոս Հակոբ Զուղայեցու գաղափարակից հայ հրատարակիչները հետամուտ էին ամբերեսելու հայ ժողովրդին սեփական պատմությանը և նոր շունչ հաղորդելու հայկական ինքնությանը:

Հայ ժողովրդի համար կարևոր այս շրջափուլում իրենց գործունեությունն սկսեցին Թովմաս Նուրիջանյան Վանանդեցին և նրա զարմիկները: Մեծ Հայքի Գողթան գավառից սերած Վանանդեցիները

րը նոր էջ բացեցին հայ տպագրության պատմության մեջ՝ նպատակ հետապնդելով տպագրական գործունեության ծավալմամբ կրթելու «խավարի մեջ ապրող» իրենց հայրենակիցներին: Նրանք ավելի քան 30 տարի (1685–1718 թթ.) աշխատեցին ի նպաստ հայ ազգի և իրենց սիրասուն հայրենիքի: Հայրենիքին օգտակար լինելու ձգտումը Թովմաս Վանանդեցուն ուղղորդեց Արևմուտք: Նա այդ հայրենանվեր առաքելությամբ երկու անգամ եղավ Եվրոպայում, կարողացավ կապեր հաստատել կարևոր քաղաքական դեմքերի հետ և օժանդակություն ստանալ Ամստերդամում իրենց տպարանի գործերը կարգի բերելու և տպագրական գործը վերակենդանացնելու համար: Հիրավի, Վանանդեցիների լույս ընծայած աշխատություններն իրենց առաջադիմական գաղափարներով նորություն էին հայ իրականության մեջ:

Վաստակաշատ հրատարակիչ Թովմաս Վանանդեցին իր մահկանացուն կնքեց 1708 թ. Բելգիայի Անվերս քաղաքում՝ հայրենիք վերադառնալու ճանապարհին՝ թողնելով հայանպաստ գործունեության՝ ուշադրության և հարգանքի արժանի փառավոր օրինակ:

**Զինա Ա. Ավետիսյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակը ընդգրկում է Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի գործունեությունը, հայ ազատագրական միտքը, անկախության գաղափարի ձևավորումն ու զարգացումը:

Էլ. հասցե՝ [avetisian.zina@gmail.com](mailto:avetisian.zina@gmail.com)

Summary

## ON THE ISSUE OF THE RELATIONSHIPS BETWEEN CATHOLICOS HAKOB JUGHAYECI AND THE VANANDETSI FAMILY

Zina A. Avetisyan

**Key words** – the Nurijanyans, the Vanandetsi, Armenian typography, enlightenment, Hakob Jughayetsi, Amsterdam, Catholic church, Propaganda Fide, awakening of national self-awareness, identity.

The beginning of the 17<sup>th</sup> century became an essential start of educational and cultural awakening for the Armenian nation. Closing the bitter pages of the wars, the Armenian people devoted themselves to the work of spreading

enlightenment, which was done through the work of book printing. The development of the Armenian typography along with “Sharaknots”, “Saghmosaran” and “Mashtots”, gave birth to some monumental works such as “History” of Arakel Davridzetsi published by Voskan Erevantsi, “The History of Armenia” by Movses Khorenatsi, the first modern Armenian world atlas “Hamatarac ashkharatsoyts” published by the Vanandetsi. Armenian publishers who shared the ideology of the Catholicos of All Armenians, Hakob Jughaetsu, sought to present their own history to the Armenian people and breathe new life into Armenianness.

Tovmas Nurijanyan Vanandetsi and his nephews started their activities in this important period for the Armenians. Coming from the Goghtn province of Greater Hayq, they opened a new page in the history of the Armenian typography pursuing the goal of educating their compatriots. For more than 30 years, they worked for the benefit of the Armenian people and the homeland. The desire to be useful for the homeland made Tovmas Vanandetsi leave for the West. With this patriotic mission, he visited Europe twice and was able to establish contacts with important political figures and get help in organizing printing in Amsterdam. The works published by the Vanandetsi, with their progressive ideas, were new for the Armenian reality.

Distinguished publisher Tovmas Vanandetsi passed away in Antwerp, Belgium, on his way back to homeland, leaving behind him a glorious example of pro-Armenian activity, truly worthy of attention and respect.

Резюме

## К ВОПРОСУ О ВЗАИМОТНОШЕНИЯХ КАТОЛИКОСА АКОПА ДЖУГАЕЦИ И ВАНАНДЦЕВ

Зина А. Аветисян

**Ключевые слова** - Нуридзяняны, ванандцы, армянское печатное дело, распространение просвещения, Акоп Джугаеци, Амстердам, католическая церковь, Конгрегация пропаганды веры, пробуждение национального самосознания, идентичность.

Начало XVII в. стало отправной точкой для культурного пробуждения армянского народа. Закрыв горькие страницы войн, армянский народ посвятил себя делу распространения просвещения, что стало возможным

благодаря книгопечатанию. Развитие армянского книгопечатания наряду с «шаракноцами», «сагмосаранами» и «маштоцами» привело к изданию таких монументальных трудов, как «История» Аракела Даврижеци, напечатанная Восканом Ереванци, «История Армении» Мовсеса Хоренаци и «Аматарац ашхарацойц» («Всеобщий Указатель мира»), изданные ванандцами. Армянские издатели, разделявшие идеологию католикоса Всех Армян Акопа Джугаеци, стремились рассказать армянскому народу его собственную историю и вдохнуть новую жизнь в армянство.

В этот важный для армянского народа период начали свою деятельность Товмас Нуридджанян Ванандеци и его родственники. Уроженцы провинции Гохтн Великой Армении, ванандцы, открыли новую страницу в истории армянского книгопечатания, преследуя цель – просветить своих соотечественников, «живущих во мраке». Более 30 лет они трудились на благо армянского народа и Родины. Желание быть полезным Родине привело Товмаса Ванандеци на Запад. С этой патриотической миссией он дважды побывал в Европе, смог установить контакты с важными политическими деятелями и в Амстердаме получить помощь в деле организации книгопечатания. Деятельность ванандцев с их прогрессивными идеями стала новаторством в армянской действительности.

Знаменитый издатель Товмас Ванандеци скончался в бельгийском Антверпене, на обратном пути на Родину. Он стал примером патриотизма, а его деятельность поистине достойна внимания и уважения.

## REFERENCES

1. **Alishan Gh.**, Sisakan, Venetik, 1893 (**In Armenian**).
2. **Amatuni K.**, Voskan vrd. Yerevants'i yev ir zhamanakë, Venetik, 1975 (**In Armenian**).
3. **Aṙak'el Davrizhets'i**, Patmut'yun, Yer., 1988 (**In Armenian**).
4. **Ayvazyan A.**, Nakhijevan. bnashkharhik patkerazard hanragitak, Yer., 2017 (**In Armenian**).
5. **Chemchemean S.**, Hay tpagrut'iwnë yev Hrom (ZHĒ dar), Venetik, 1989 (**In Armenian**).
6. **Dubiez F.**, Hayeren grk'eri tpagrut'yunë Amsterdamum XVII-XVIII darrerum, "Haykakan SSR gitut'yunneri akademiayi teghekagir", Yer., 1963, N 2, ëj 83-92 (**In Armenian**).
7. **Kiwreghean-Palëk'chean Kh.**, Aṙewtur yev bargawachum (Amst'ërtami hayots' gaghutë), Amst'ërtam, 2018 (**In Armenian**).
8. **Lëo**, Haykakan tpagrut'iwn, hat. 1, T'iflis, 1904 (**In Armenian**).
9. **Levonyan G.**, Hay girik'ë yev tpagrut'yan arvestë, Yer., 2012 (**In Armenian**).
10. **Leyn J.**, Haykakan gratput'yan sp'yurk'ë 1512-2012 t't'., Amsterdam-Yerevan, 2012 (**In Armenian**).
11. **Maghalyan A.**, Arts'akhi melik'ut'yunnerë yev melik'akan tnerë XVII-XIX dd., Yer., 2007 (**In Armenian**).
12. **Sarukhan A.**, Belgia yev hayerë, Vienna, 1937 (**In Armenian**).



13. **Sarukhan A.**, Hollandan yev hayerč, Vienna, 1926 (**In Armenian**).
14. **Schütz O.**, Nikola Mist'ot'folushi K'ish yev hay grk'i t'pagrut'yunč, t'argm.' **M. K. Sevak**, "Handēs Amsōreay", Vienna, 1960, N 7-9, ēj 401-415 (**In Armenian**).
15. **Ter-Grigorean M.**, Nor niwt'er yev ditoghut'iwnner hratarakich' Vanandets'wots' masin, "Handēs amsōreay", Vienna, 1965, N 7-9, ēj 347-360, 1966, N 1-3, ēj 43-58, N 4-6, ēj 171-184, N 7-9, ēj 309-322, N 10-12, ēj 469-474, 1967, N 1-3, ēj 51-66 (**In Armenian**).
16. **Voskanyan N., Korkotyan K'., Savalyan A.**, Hay girk'č 1512-1800 t'vakannerin, "Hay grk'i matenagitut'yun", hat. 1, Yer., 1988 (**In Armenian**).